ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագիր
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ
ԾՐԱԳԻՐ P155662
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

Արևային ՖՎ ծրագրի ղեկավար, SPP-CS-5/2015

Սույն հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավերը հետևում է ծրագրի գնումների ընդհանուր ծանուցմանը, որը տպագրվել է UN Development Business-ում 2015թ. հունիսի 23-ին և www.gnumner.am (www.procurement.am) կայքում:

Հայաստանի Հանրապետությունը ստացել է դրամաշնորհ Կլիմայի ներդրումների Հիմնադրամից Վերականգնվող Էներգետիկայի Ընդլայնումը ցածր եկամուտ ունեցող Երկրներում Ծրագրի շրջանակներում (ՎԷԸԾ) և նպատակ ունի միջոցների մի մասն ուղղել խորհրդատվական ծառայությունների մատուցմանը՝ Հայաստանի Արդյունաբերական մասշտաբի արևային էներգիայի ծրագրի շրջանակներում գնումների իրականացմանը:

Նպատակը
Առաջադրանքի նպատակն է ծրագրի իրականացման ընթացքում աջակցել Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին (ՀՎԷԷՀ) միջազգային խորհրդատվական ընկերությունների հետ միասին մասնակցելու արևային ներուժի գնահատման, արևային ճառագայթային էներգիայի չափման սարքավորումների ընտրության, առավել շատ ներուժ ունեցող տեղանքներում արևային ՖՎ կայանների պլանավորման գործընթացներում:

Խորհրդատուն պատասխանատու է ներքոնշյալ հիմնական գործառույթների համար.

- Համակարգել և հետևել աշխատանքներին, կատարել ստուգումներ և դիտարկումներ Ծրագրի նախապատրաստական փուլում ՀՎԷԷՀ կողմից ընտրված խորհրդատուների մատուցած ծառայությունների և աշխատանքների վերաբերյալ:
- Կառավարել ինժեներական խորհրդատվական ծառայությունները, այդ թվում շրջանակների սահմանումը, բյուջեի և ժամանակացույցի մշակումը, կադրային, տեխնիկական վերահսկողության և փոփոխությունների կառավարումը, ժամանակին աշխատանքների հաջող իրականացման պատասխանատվությունը՝ բյուջեի և ՀՎԷԷՀ պահանջներին համապատասխան:
- Նպաստել զեկույցների, ուսումնասիրությունների և առաջարկությունների նախապատրաստմանը:
- Ղեկավարել և համակարգել ՀՎԷԷՀ կողմից ներգրավված ազգային փորձագետների և խորհրդատուների աշխատանքները:
- ՀՎԷԷՀ ֆինանսական բաժնի հետ նախապատրաստել և վերահսկել Ծրագրի բյուջեն:
- Ծրագրի Գնումների պլանի թարմացման համար տրամադրել պահանջվող օժանդակություն:
- Նպաստել տեղանքի ընտրության, ռեսուրսների գնահատման ուսումնասիրություններին և տեխնիկատնտեսական հիմնավորումներին առընչվող ընթացակարգերին:

- Պատրաստել համապատասխան աղյուսակներ և ձևանմուշներ Ծրագրի պատշաճ կառավարումն իրականացնելու նպատակով և այլն:

Թեկնածուն պետք է ունենա հետևյալ որակավորումները.

- Ճարտարագիտության/տնտեսագիտության մագիստրոսի աստիճան (տ.գ.թ.աստիճան, աստիճանավորում էներգետիկայի բնագավառում կամ համապատասխան սերտիֆիկատները ցանկալի են):
- Նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձ նոր տեխնոլոգիաների և ծրագրի կառավարման/համակարգման ոլորտում:
- Ցանկալի է միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացրած աշխատանքների փորձառություն:
- Գիտելիքներ ինժեներական տնտեսագիտության բնագավառում:
- Անձնակազմի կառավարման և համակարգման համապատասխան փորձ:
- Հաղորդակցության գերազանց կարողություններ, թիմային աշխատանքի և ծրագրերի կառավարման հմտություններ:
- Անգլերեն լեզվի գերազանց իմացություն:
- Հաշվետվությունների պատրաստման գերազանց ունակություններ:
- Համապատասխան համակարգչային ծրագրերի իմացություն:
- ՀՀ մարզեր և արտերկիր մեկնելու կարողություն:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամն այժմ հրավիրում է իրավասու խորհրդատուներին ներկայացնելու իրենց հետաքրքրության հայտերը ծառայությունների մատուցման համար: Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն ինքնակենսագրական սեղմագրեր (CVs), որոնք ներառում են տեղեկատվություն Ծառայությունների իրականացման համար պահանջվող որակավորման և համապատասխան փորձի վերաբերյալ: Ընտրության չափանիշները հետևյալն են.

- Ընդհանուր որակավորումը
- Համապատասխանությունը ծրագրին
- Լեզուների իմացությունը

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրվում է Բանկի կողմից 2011թ. հունվարին /վերանայված հուլիս 2014թ. /հրատարակված Համաշխարհային Բանկի Ուղեցույցի 1.9 կետին՝ “Խորհրդատուների ընտրությունը և աշխատանքի ընդունումը ՎԶՄԲ փոխառության, ՄԶԸ վարկերի և Համաշխարհային Բանկի վարկառուների դրամաշնորհների շրջանակում” /Խորհրդատուի ուղեցույց/, որը սահմանում է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ: Խորհրդատուի ընտրությունը կատարվում է ըստ Համաշխարհային Բանկի՝ “Խորհրդատուների ընտրությունը և աշխատանքի ընդունումը ՎԶՄԲ փոխառության, ՄԶԸ վարկերի և Համաշխարհային Բանկի վարկառուների դրամաշնորհների շրջանակում” Ուղեցույցում /հունվար 2011, վերանայված հուլիս 2014/ բերված ընթացակարգերի համաձայն:

Լրացուցիչ տեղեկություն կարելի է ստանալ ստորև նշված հասցեով տեղական ժամանակով **9:00-18:00 (GMT+4:00):**

Հետաքրքրությունների հայտը պետք է հանձնել ստորև նշված հասցեով մինչև **2016թ. դեկտեմբերի 5-ը**:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
Տնօրեն՝ Թամարա Բաբայան
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պռոշյան 1-ին նրբանցք, 32 տուն;
Հեռախոս / Ֆաքս՝ 374 10 – 58 – 80 -11;
e-mail: g.zara@r2e2.am; info@r2e2.am
Վեբ կայք՝ www.r2e2.am